

Իր քերթուածներուն անմիջական մասը եւ շարունակութիւնը կը կազմէն իր հէքեաթները: Ըստ իս, հէքեաթը գրականութեան այն ձեւն է որուն յաջողապէս մշակումը ամէնէն աւելի դժուար է: Հէքեաթը իրականութիւնը չէ, բայց իրողութեամբ մը կենդանացած պատմուածքն է. անկէ բարոյական եզրակացութիւն չի պահանջուիր, խիստ շատ անգամ. ժողովրդային ասանդութիւն մըն է, յաճախ տրտում իմաստով, եւ գոր կ'ոգեւորէ, կ'աղուորցնէ, կը պնտուորէ գրողը իր երեւակայութեան շողովը: Եւ Զարդարեան, գրական այս ձեւին մէջ, անգուգական վարպետ մը, կրնամ ըսել՝ մասնագէտ մըն է: Թրքահայ ժամանակակից գրականութեան մէջ բացառիկ տեղ մը կը գրաւեն իր հէքեաթները իրենց անթերի կերտուածքովը. *Քարացածները*, *Ծովակիին հարսը*, *Մարդը չէր մեռները* մէյմէկ գոհարներ են, մամիկի միամիտ ու պարզ մասալներ, բայց գորս գրագէտը գեղագարդեր է, իր երեւակայութեամբը պայծառացուցեր, իր հոգիովը շնչաւորեր է: *Քարացածները* կնոջական գեղեցկութեան պանծացումն է. անոր յանդուգն ցուցադրումէն՝ բնութիւնը զայրալից նախանձով լի՝ կը քարացնէ մարդկային ամբոյս մը: *Ծովակիին հարսին* մէջ կը պատմուի սիրահարութիւնն աղուոր հարսին ու ծովուն ալիքներէն ծնած տղուն. բայց մարդկային չար նախանձը միշտ ներկայ, պառաւի մը կերպարանքին տակ կը միջամտէ. վայրագ անուսինը, կատղած, կը սպաննէ ծովակիին հարսը որ կ'անիծէ էրիկը, կ'անիծէ պառաւը եւ գիւղը, եւ ծովը ասոնք ամէնքը մէկէն կուլ կուտայ: *Մարդը չէր մեռները* մեզ կը ներկայացնէ այն երանելի ժամանակը ուր մարդը անմահ էր. անմահութեան շրջանի այդ նկարագրութիւնը մեր արդի մատենագրութեան ամէնէն գեղեցիկ էջերէն մէկն է: Մարդկային բաղձանքներուն բովանդակ անպարագիծ ունայնութիւնը կը պատկերանայ հող. հոգիդ կը լեցուի բուն տիրութեամբ այն նախասահմանուած ու ճակատագրական ձախողուածքին առջեւ որով ծերունին, իր կեանքին տարիներուն թիւն երկարելու համար, խելայեղօրէն կը նետուի ամբողջ մարմնովը